ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-3-3-Ա

ք. Երևան 09.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 9-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 23-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Բեյք մարկետ» ՍՊԸ ընկերության (Երևան, Արշակունյաց պող., շ. 2, շինություն 1, AM) «the Bake House» (No20221168) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է նկարագրական բնույթի «the BAKE HOUSE» արտահայտությունից, որը նշում է խնդրարկված 2-րդ, 21-րդ դասերի ապրանքների ստեղծման նպատակը, այն է՝ թխելու և թխվածքը ձևավորելու համար նախատեսված պիտույքներ: Օրենքի 11-րդ, 13-րդ հոդվածների համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես ապրանքային նշաններ և բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի

տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Ինչպես նաև հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «the BAKE HOUSE» գրառումը ներառող նիշը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն մատուցվող ծառայության բնույթի վերաբերյալ: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «Baker House» (Limited Liability Company «TrustInvestStroi» Fruit and vegetable base, Warehouse No 30, Ramensky district, Kuznetsovo village, RU-140192 Moscow (RU), IR 1228793 10.09.2014) բառային ապրանքային նշանին: Կարգի 119-րդ կետի 1-ին ենթակետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի, 124-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել բառային ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող բառային ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ հայտարկված նիշի բառային արտահայտությունն ամբողջությամբ ներառված է ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի մեջ, ինչպես նաև իմաստային նմանություն, որը որոշվել է նշանների մեջ դրված նման հասկացությամբ, գաղափարով: Անդրադառնալով Ձեր նկատառումներին, առ այն, որ բազմաթիվ ապրանքային նշանները կարող են ասոցացվել նկարագրական տարրերի հետ և դա դեռևս չի նշանակում, որ առկա է նշանի գրանցման բացարձակ մերժման հիմք: Տվյալ իրավիճակում մերժման ենթակա կլիներ օրինակ՝ «bakery» նշանի գրանցումը, որը ինքնին նշանակում է փուռ, մինչդեռ «bake house» արտահայտությունը միայն փոխաբերական իմաստով կարող է այդ նշանակությունը ունենալ: Նմանատիպ դեպքերում անընդունելի է օրենքով սահմանված բացարձակ մերժման հիմքի կիրառումը, ապա ցանկանում ենք հայտատուի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ չնայած այն փաստին, որ հայտարկված ապրանքային նշանը իրենից ներկայացնում է իրար տակ գրված «the bake house» արտահայտությունը, այն միևնույն է կարդացվում է «the bakehouse», որն էլ անգլերենից թարգմանաբար նշանակում է փուռ (տես՝ https://www.lingvolive.com/en-us/translate/en-ru/bakehouse):

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, բացառությամբ 41-րդ դասի՝ «գործնական հմտությունների ուսուցում (ցուցադրություն), սեմինարների կազմակերպում և անցկացում, վարպետաց դասերի կազմակերպում և անցկացում (ուսուցում). բոլոր վերը նշված ծառայությունները, որոնք վերաբերվում են փոերի գործունեությանը» ծառայությունների համար, քանի որ վերը նշված ծառայությունների համար ներկայացված ապրանքային նշանը չի կարող սպառողներին մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Բեյք մարկետ» ՍՊԸ ընկերության «the Bake House» (No20221168) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել՝ դաս 41-ի «գործնական հմտությունների ուսուցում (ցուցադրություն), սեմինարների կազմակերպում և անցկացում, վարպետաց դասերի կազմակերպում և անցկացում (ուսուցում). բոլոր վերը նշված ծառայությունները, որոնք վերաբերվում են փոերի գործունեությանը» ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ